

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

1986 թվականի ապրիլ ամսին Փարիզում գումարվեց Ֆրանսիայի հայ բժիշկների համագումարը, որի նպատակն է համախմբել Ֆրանսիայի հայ բժիշկների ջանքերը՝ գիտական առավել արդյունավետ համագործակցության, բժշկական փոխօգնության և ֆրանսահայ գաղութի ազգային կյանքին գործուն մասնակցություն ունենալու համար:

Այդ առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հետևյալ Օրհնության խոսքը հղեց համագումարին.

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Սրտանց կ՚ողջունենք Ֆրանսայի հայ բժիշկներու համագումարը, մաղթելով որ իր աշխատանքը կատարէ գիտական բարձր մակարդակի վրայ եւ հանդիսանայ նպաստ մը Ֆրանսայի բժշկական գիտութիւններու զարգացման ճանապարհին:

Մենք հպարտ ենք որ Ֆրանսա բնակող Հայ Եկեղեցւոյ զաւակներ նուիրուած են բժշկական գիտութեան մարդասիրական ասպարէզին պատիւ բերելով հայ ժողովուրդին:

Մեր գնահատանքը, Մեր քաջալերանքը եւ Մեր Օրհնութիւնը համագումարին մասնակցող բոլոր բժիշկներուն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 ապրիլ 1986 թ.